

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____/Է.Հովհաննիսյան/

«31» օգոստոս 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 138 հիմն.դպրոց

II^ա

Էմալյան Սուսաննա

դասղեկի ազգանունը, անունը

2023-2024 *ուստարի*

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուրբնութագիրը)

Երկրորդ «ա» դասարանում սովորում են քսանյոթ աշակերտ՝ 12 աղջիկ,15 տղա:Բոլորը ֆիզիկապես առողջ են:Ապահովված են դասագրքերով և անհրաժեշտ գրենական պիտույքներով:Դասարանում ստեղծված է աշակերտական համերաշխ կոլեկտիվ,որտեղ իշխում է փոխադարձ հարգանքը,ընկերական սերը և համերաշխությունը:

Կարգապահ են,պարտաճանաչ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ***ա/*** Ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը:Համախմբել դասարանը,ստեղծել համերաշխ կոլեկտիվ:

բ/ Թափանցել երեխաների ներաշխարհը,ուսումնասիրել նրանց հետաքրքրություններն ու հակումները,կամքն ու բնավորության գծերը:

գ/ Զարգացնել երեխաների տրամաբանական մտածողությունը,ուշիմությունը,նրբանկատությունը,արագ ու ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

դ/Մշակել կուլտուրական վարքի հմտություններ՝ճիշտ և գեղեցիկ դիմելաձև,խոսքի կուլտուրա:Կարևոր է,որ աշակերտի վարքը լինի գիտակցված և իմաստավորված:

3. Հայեցի դաստիարակություն

- Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակության կարևոր նախապայմանը բարությունն է:Ծանոթացնել հայ Առաքելական եկեղեցեու տաղավարաց տոներին,Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝որպես հոգևոր կենտրոնի,նրա նշանակության ու դերի մասին:Կարդալ Աստվածաշնչյան թեմաներ բարության և մարդասիրության վերաբերյալ:

- *Գեղագիտական դաստիարակություն*

Զարգացնել աշակերտների գեղագիտական մտածողությունը,ստեղծագործական երևակայությունը,տեսողական հիշողությունը և տարածական պատկերացումները:Արթնացնել հետաքրքրություն գեղեցիկի նկատմամբ՝ արվեստում և իրակ.մեջ:

- *Ռազմահայրենասիրականդաստիարակություն*

Երեխաներին տեղեկություն տալ Հայաստանի Հանրապետության զինանշանի,դրոշի,մարզերի մասին:Սովորեցնել Հայաստանի Հանրապետության օրհներգը:

- *Ֆիզիկական դաստիարակություն*

Ապահովել երեխաների ֆիզիկական դաստիարակությունը:Ֆիզիկական կուլտուրայի սիստեմատիկ պարապմունքների ընթացքում դաստիարակել հետաքրքրություն սպորտի,առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ:

- ***Աշխատանքային դաստիարակություն***

Աշխատասիրությունը հիմք է հանդիսանում բոլոր հաջողությունների:Դրա համար անհրաժեշտ է զարգացնել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը և պարտաճանաչությունը:Սկսած գործը հասցնել ավարտին:

- ***Բնապահպանական դաստիարակություն***

Հայրենի բնաշխարհի պահպանումն ուխնամքը շատ կարևոր հիմքեր պետք է ունենա յուրաքանչյուր անձի մոտ:Տեսնել,զգալ,գնահատել բնության գեղեցկությունը:

- ***Դպրոց-ընտանիք կապը***

Ապահովել դպրոց-ընտանիք կապը:Կազմակերպվել զրույցներ երեխաների առողջության,հանգստի,խաղի,ուսուցման ճիշտ կազմակերպման վերաբերյալ: Նաև դպրոց-ուսուցիչ_ծնող-երեխա փոխհարաբերությունների վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	*Ուս. աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	*Կատարող*
I	Ընդունել դասարանը:Երեխաներին ապահովել դասագրքերով:Հորդորել,որպեսզի պահեն սահմանված կանոնները:	01.09.2023թ.	դասվար
II	Աշակերտներին ծանոթացնել իրենց պարտականություններին:Խոսել վարքի կանոնների մասին:	08.09.2023թ.	դասվար
III	«Դպրոցական գույքի պահպանում»:	15.09.2023թ.	դասվար
IV	ՀՀ Անկախության 32 ամյակն է:Երգել ՀՀ օրհներգը:	22.09.2023թ.	դասվար
V	«Իմ առօրյան»	29.09.2023թ.	դասվար
VI	Անցկացնել զրույց գրադարանի,գրադարանավարի և նրանց կարևորության մասին:	06.10.2023թ.	դասվար
VII	Անցկացնել զրույց քաղաքամայր Երևանի,նրա հիմնադրման մասին:	13.10.2023թ.	դասվար
VIII	Անցկացնել զրույց աշնան,նրա գունագեղության մասին:	03.11.2023թ.	դասվար
IX	Անցկացնել զրույց ընտանիքի մասին:Յուրաքանչյուր աշակերտ պատմի իր ընտանիքի մասին:	10.11.2023թ.	Դասվար
X	Անցկացնե լզրույց«Հայրենիքը և նրա պահպանումը» թեմայով :	17.11.2023թ.	Դասվար
XI	Անցկացնել զրույց գիտելիքի կարևորության մասին: :	24.11.2023թ.	Դասվար
XII	«Ունեցիր մեկ ընկեր,քան հազար ոսկի»:Զրույց ընկերասիրության մասին:	01.12.2023թ.	Դասվար
XIII	Զրույց բնական աղետների մասին:	08.12.2023թ.	Դասվար
XIV	«Մեր դպրոցը»:	15.12.2023թ.	Դասվար
XV	Տոնական բացիկների պատրաստում:	22.12.2023թ.	Դասվար
XVI	Պահպանել և խնամել ձմեռող թռչուններին:	26.01.2024թ.	Դասվար
XVII	Ճանապարհային նշանների իմացություն:	02.02.2024թ.	Դասվար
XVIII	Գիրքը գիտելիքի աղբյուր է:	09.02.2024թ.	Դասվար

XIX	Անաղարտ պահել մայրենի լեզուն:	16.02.2024թ.	Դասվար
XX	Բանակը հայրենիքի սիրտն է:	23.02.2024թ.	Դասվար
XXI	Գարունը զարթոնք է,նոր կյանքի սկիզբ:	01.03.2024թ.	Դասվար
XXII	Մարտի 8՝Կանանց միջազգային օր:Բացիկների պատրաստում:	07.03.2024թ.	Դասվար
XXIII	Բարեխիղճ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:	15.03.2024թ.	Դասվար
XXIV	Հայկական տոները և ավանդույթները:	22.03.2024թ.	Դասվար
XXV	Մայրության տոն:	05.04.2024թ.	Դասվար
XXVI	Գնահատել ժամանակը և օրը կազմակերպել ճիշտ:	12.04.2024թ.	Դասվար
XXVII	Մեծ Եղեռն:	19.04.2024թ.	Դասվար
XXVIII	Աշխարհը երեխաների աչքերով:	26.04.2024թ.	Դասվար
XXIX	Դառնալ հայրենիքի արժանավոր զավակ:	03.05.2024թ.	Դասվար
XXX	Մարդը գնում է,գործը մնում:	10.05.2024թ.	Դասվար
XXXI	Այց Աթաբեկ Խնկոյանի գրադարան:	17.05.2024թ.	Դասվար
XXXII	Հանձնարարություններ ամառային արձակուրդների համար:	24.05.2024թ.	Դասվար

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	*Միջոցառման բովանդակությունը*	*Ծանոթություն*
07.09.2023թ.	Հարմարվել նոր պայմաններին:	
14.09.2023թ.	Վարքի կանոններ ըդպրոցում:	
21.09.2023թ.	Անկախության օրը:	
28.09.2023թ.	«Իմ ընտանիքը» թեմայով զրույց:	
05.10.2023թ.	Գրադարանավարի օրը:	
12.10.2023թ.	Երևանի 2804 ամյակը:	
13.11.2023թ.	Աշնան գույները:	
09.11.2023թ.	Օրվա ռեժիմը:	
16.11.2023թ.	Դպրոցական գույքի պահպանում:	
23.11.2023թ.	«Հայրենիքը սրբություն է» թեմայով զրույց:	
30.11.2023թ.	«Հավատարիմ ընկերը գին չունի» թեմայով զրույց:	
07.12.2023թ.	Բնական աղետներ	
14.12.2023թ.	Գիտելիքի դերը մեր կյանքում:	
21.12.2023թ.	Տոնական բացիկների ձևավորում:	